**ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

02.08.2021 18:30

**Հարգելի փաստաբաններ,**

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ ***2021 թվականի սեպտեմբերի 12-ին (կիրակի օր), ժամը 09$^{30}$-ից Երևան քաղաքի Զաքյան 7-2 հասցեում գտնվող ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) տեղի է ունենալու Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցով.***

- ***ՀՀ փաստաբանների պալատի նախագահի ընտրություն:***

1. Օրակարգային հարցով **<u>քվեարկությունը</u>** սկսվում է **2021 թվականի սեպտեմբերի 12-ին, ժամը 09$^{30}$-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 17$^{30}$-ին**:

2. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի **<u>թեկնածուների առաջադրումը (ինքնաառաջադրումը)</u>** սկսվում է **2021 թվականի օգոստոսի 15-ից (ներառյալ) և ավարտվում է 2021 թվականի օգոստոսի 20-ին (ներառյալ)**:

3. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի **<u>թեկնածուների քարոզչությունը</u>** սկսվում է **2021 թվականի օգոստոսի 21-ից (ներառյալ) և ավարտվում է 2021 թվականի սեպտեմբերի 10-ին, ժամը 18$^{00}$-ին**:

4. **2021 թվականի սեպտեմբերի 11-ը համարվում է լռության օր:**

5. Յուրաքանչյուր փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**

6. Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**

7. Քվեարկության գաղտնիությունը քվեարկող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն:

Ընդհանուր ժողովի հետ կապված անհրաժեշտ այլ տեղեկությունները, կարող եք բեռնել ՀՀ փաստաբանների պալատի www.advocates.am

կայքէջից:

Հայաստանի Հանրապետության

փաստաբանների պալատի

աշխատակազմ

**Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 02.08.2021թ. թիվ 150-Լ որոշումը**

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })